



ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ՇԱՐԿԱԹԱԹԵՐԹԻ

Մայիս 2024

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Մայիս ամիսը գարնան եղանակի ամենից գեղեցիկ ամիսն է: Այս պատճառով ալ կարծես Մայիսի երկրորդ Կիրակին նուիրուած է մայրերուն, իրենց անհամար սիրոյն եւ զոհողութեան համար:

Մայիս ամիսը յատկանշական է նաեւ հայ ժողովուրդին համար: 1918 Մայիսին էր, երբ ջարդէն ետք, հայեր հաւաքելով իրենց ուժերը, մէկ բուռցք դարձած՝ դէմ դրին իրենց դարաւոր թշնամիին, ստրկութեան եւ սուգին վերջ տալու նպատկով: Սարգարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէի ճակատագրական ճակատամարտերուն յաղթանակներ տանելով, հայ ժողովուրդը անկախութիւն հռչակեց, եւ կապոյտ երկնակամարին վրայ անգամ մը եւս ծածանեցաւ եռագոյնը:

Տարիներ ետք, 1992-ին, հայ ժողովուրդը նոյն այս բախտաբեր ամսուան մէջ արձանագրեց փայլուն յաղթանակ մը եւս՝ Շուշի քաղաքի ազատագրումը: Հայ կտրիճներու սուրբ արիւնով հողը ետ բերուեցաւ, որպէսզի հայը ապրի ազատ ու անկախ իր հայրերէն ժառանգած հողին վրայ:

Ներկայիս կրկին անգամ հայ ժողովուրդը դժուար օրեր կ'ապրի: Սակայն, բոլորս գիտենք, թէ մենք ձեռք-ձեռքի տալով պիտի կարենանք մեր իրաւունքները պաշտպանել եւ վերատիրանալ մեր հողերուն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԸ

Հայաստանի Հանրապետութեան պետական խորհրդանշաններէն մէկն է զինանշանը, որուն հեղինակներն են ճարտարապետ Ալեքսանտր Թամանեանը եւ նկարիչ Յակոբ Կոջոյեանը:

Հայաստանի Հանրապետութեան զինանշանին կեդրոնը, վահանի վրայ կը տեսնուին Արարատ լեռը՝ Նոյեան տապանով, եւ Պատմական Հայաստանի չորս թագաւորութիւնները՝ Արտաշէսեան, Արշակունեան, Բագրատունեան եւ Ռուբինեան:

Վահանին ետեւը ձախ կողմէն կանգնած է արծիւը եւ աջ կողմէն՝ առիւծը, իսկ վահանին տակ պատկերուած են սուր, ճիւղ, հասկերու խուրձ, շղթայ եւ ժապաւէն: Հայաստանի Հանրապետութեան զինանշանի հիմնական գոյնն է ոսկեգոյնը, պատմական Հայաստանի թագաւորութիւններու գոյներն են կարմիրն ու կապոյտը, իսկ կեդրոնը՝ վահանին վրայ պատկերուած Արարատ լեռան գոյնն է նարնջագոյնը: Նշուած գոյները կը խորհրդանշեն Հայաստանի Հանրապետութեան դրօշի գոյները:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՅՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԸ



1968 թուականի Մայիսին, Սարգարապատի ճակատամարտին հայ ժողովուրդի արձանագրած յաղթանակի 50-ամեակին առթիւ կառուցուած է Սարգարապատի հերոսամարտի յուշահամալիրը:

Յուշահամալիրի ճարտարապետն է Ռաֆայէլ Իսրայէլեանը, իսկ քանդակագործներն են Արշամ Շահինեանը, Սամուէլ Մանասեանը եւ Արա Յարութիւնեանը: Իրենց այս ստեղծագործութեամբ, անոնք յաջողեցան միացնել Հայոց Պատմութիւնը իր յաղթանակով, ինչպէս նաեւ հայոց ճարտարապետութիւնն ու հայոց դարերու ազգային մշակոյթը իրենց քանդակներով եւ հարթաքանդակներով:

Յուշահամալիրը կառուցուած է ճակատամարտի վայրին տեղը եւ պատուած է տուֆ քարով:



Հոյակապ տեսք ունին անոր թեւաւոր ցուլերը եւ զանգերը: «Ձանգակատունը» ունի 35 մետր բարձրութիւն: Ան կազմուած է չորս սիւներէ: Երեք շարքերով, երկու յարկի վրայ կախուած են զանգերը. առաջին յարկին վրայ կախուած են երեք զանգեր, իսկ երկրորդ յարկին ամէն մէկ կամարին տակ կան երեք զանգեր, որոնց ընդհանուր թիւը կը կազմէ 12:

Այս յուշահամալիրէն ձախ, փոքր բարձրունքի վրայ, 1978-ին կառուցուած է Հայաստանի ազգագրութեան թանգարանը: Այս թանգարանին մէջ կը պահպանուին հայ մշակութային ժառանգութեան վերաբերող պատմամշակութային արժէքներ՝ հին ժամանակներէն մինչեւ մեր օրերը:

Հրապարակին աջ կողմը կը հանգչին Արցախեան գոյամարտի ազատամարտիկները: Հոն կան գերեզմանաքարեր եւ յուշակոթողներ:

22-28 Մայիս 1918-ին, եկեղեցիներու զանգերը հնչած են Արագածոտնէն մինչեւ Սեւան, բոլորին կոչ ուղղելով ռազմաճակատ երթալու:

Այսօր, Սարգարապատի համալիրին զանգերը կը հնչեն հանդիսաւոր արարողութիւններու ժամանակ:



ՎԱՐԴԱՆ ԱՅԵՓԱՆԵԱՆ (ՏՈՒՇՄԱՆ)

Վարդան Ստեփանեան յայտնի է Տուշման անունով: Ան զօրակոչուած է խորհրդային բանակ եւ մասնակցած է Աֆղանիստանի կռիւներուն: Արիութեան եւ խիզախութեան համար ստացած է բազմաթիւ շքանշաններ:

1986-ին ընդունուած է Երեւանի Պետական Համալսարանի իրաւաբանութեան բաժանմունքը:

Արցախեան շարժումի առաջին իսկ օրերէն, Տուշման նետուած է պայքարի դաշտ՝ մասնակցելով Երասխաւանի, Շահումեանի, Մարտակերտի եւ Ասկերանի շրջաններու ինքնապաշտպանութեան կռիւներուն: Ան նշանաւոր դէմք էր յատկապէս Խոջալուի եւ Շուշիի ազատագրական կռիւներուն:

Վարդան Ստեփանեան յետ մահու պարգեւատրուած է «Մարտական խաչ» առաջին եւ երկրորդ կարգի շքանշաններով, ինչպէս նաեւ «Շուշիի ազատագրման» եւ «Մօր երախտագիտութիւնը Արցախ աշխարհի հերոս զաւակներուն» մետալներով: Ան նահատակուած է Յուլիս 3-ին, 26 տարեկանին, Մարտունիի մօտակայքը՝ ականի մը պայթումին պատճառով: Այս քաջ հերոսի մարմինը կը հանգչի Եռաբլուր՝ հայ զինուորներու գերեզմանոցին մէջ:

Շուշիի փողոցներէն մէկը կը կոչուի Վարդանի անունով եւ բազմաթիւ դպրոցներու մէջ կան Վարդանի անունը կրող դասարաններ: Նշենք նաեւ, թէ երգեր նուիրուած են իր անունին, որոնցմէ մէկն է Գուսան Հայկազունի «Հպարտ գնացէք» երգը:

ՇՈՒՇԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ



Մայիսի 9-ին հայ ժողովուրդը կը նշէ Արցախի հնագոյն քաղաքներէն Շուշիի ազատագրման օրը:

1992-ի Փետրուարէն սկսեալ Ստեփանակերտը մշտական ուժակոծութեան տակ էր, եւ հրթիռները կարկուտի նման կը թափէին Ստեփանակերտի եւ Շուշիի վրայ: Շուշին պէտք էր ազատագրել:

Մայիս 8-ի կէս գիշերէն ետք, ժամը 2:30-ին գործողութիւնը կը սկսի 3800 հոգիէ բաղկացած ջոկատով, որոնց ղեկավարը կ'ըլլայ Քոմանտոսը՝ Արկադի Տէր Թադէոսեան, իր հետ ունենալով գնդապետներ՝ Արկադի Կարապետեան, Աշոտ Ղուլեան, Տուշման Վարդան, Նուէր Չախոյեան, Ժիրայր Սեֆիլեան, Աշոտ Խաչատրեան եւ Սէյրան Օհանեան: Շուշին կ' ազատագրուի 26 ժամուան ընթացքին եւ լուսաբացին բերդաքաղաքի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցոյ քանդուած գմբէթին վրայ կը սկսի ծածանիլ հայոց յաղթական եռագոյնը:

9 Մայիս 1992-ի առաւօտեան հայկական ջոկատները յաջողութեամբ կ'ազատագրեն հրաշագեղ Շուշին:



Տարիներու ընթացքին, Ատրպէյճան յաճախ փորձեր կը կատարէ յարձակելու եւ գրաւելու Արցախը, բայց կը հանդիպի հայ քաջ զինուորներու դիմադրութեան ու կը պարտուի:

Դժբախտաբար սակայն, 27 Սեպտեմբեր 2020-ին, Ատրպէյճանին կը միանան Թուրքիան եւ այլ վարձկան ահաբեկիչներ, որոնք նորագոյն հրթիռներով կը յարձակին Արցախի վրայ եւ տեղի կ'ունենայ Արցախեան 44-օրեայ պատերազմը: Անոնք Հոկտեմբերի 8-ին կը հարուածեն Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին: Շուշին գրաւելէն ետք, Ատրպէյճանը կը սկսի քանդել քաղաքը եւ ոչնչացնել հայկական մշակոյթին պատկանող բոլոր կառոյցներն ու յուշակոթողները:

ՀՊԱՐՏ ԳՆԱՅԷՔ

Խօսք եւ երաժշտութիւն՝ Գուսան Հայկազունի

Պատերազմ էք գնում, ուրախ գնացէք,
Վարդանի արիւնն է ձեր մէջ, իմացէք,
Նոր կազմաւորուած հայոց բանակի,
Առաջին զինուորն էք, հպարտ գնացէք:

Կրկներգ՝
Ինչքան էլ որ դժուար լինի, դիմացէք,
Վախկոտն ամէն օր է մեռնում, իմացէք,
Քաջերը՝ մէկ անգամ փառքով, իմացէք,
Հողն արիւնով են պահում, իմացէք:

Քաջերի կորստով ցաւել ենք դարեր,
Հողերի կորստով՝ հազարամեակներ,
Այժմ շատ են պէտք մեզ յաղթանակներ,
Դէպ փառք ու յաղթանակ, այսպէս գնացէք:

Կրկներգ՝
Ինչքան էլ որ...

Դուք մեր նախնեաց հողը նորից են բերէք,
Մեր հայկազեան փառքը նորից են բերէք,
Մուշն ու Սասուն, Արարատը են բերէք,
Դէպ Արցախ, Մուսալեռ բարով գնացէք:

Կրկներգ՝
Ինչքան էլ որ...



ԶԻՆՈՒԱԾ ՈՒԺԵՐՈՒ ԶԻՆԱՆՇԱՆԸ

23 Յունուար 2001-ին Հայաստանի Հանրապետության նախագահ, Զինուած Ուժերու գլխավոր հրամանատար Ռուպերթ Քոչարեան հաստատեց Հայաստանի Հանրապետության Զինուած Ուժերու զինանշանը:

Զինանշանը վահանաձև է: Վերը գրուած է՝ «ՀԱՅԱՍՏԱՆ», վարը՝ «ԶԻՆՈՒԱԾ ՈՒԺԵՐ» բառերը:

Վահանին մնացեալ բաժնին մէջ կը տեսնենք հետեւեալ պատկերները. Թեատարած արծիւ մը՝ դէպի աջ դարձած: Արծիւը կը խորհրդանշէ ուժ, հզօրութիւն եւ կամք: Արծիւին իրաքանջիւր թելը բաղկացած է եօթ փետուրներէ, որոնք կը խորհրդանշեն շաբթուան օրերը: Արծիւին գլուխը կը գտնուի արեւուն վրայ եւ կը նշանակէ, թէ այնքան աստե՛ն որ արեւը կայ, կան նաեւ Հայաստանն ու Հայկական Զինուած Ուժերը: Արեւի ճառագայթներուն վրայ կ'երեայ եռագոյն դրօշը: Արծիւին մարմինը կազմուած է հայկական կլոր վահանէ, որ կը խորհրդանշէ երկրին ապահովութիւնն ու պաշտպանութիւնը: Վահանին ներսի բաժնին մէջ կ'երեայ հաւասար թեւերով խաչը, որ կը հաստատէ մեր դասանանքը՝ քրիստոնէութիւնը: Զինանշանին վերջին տարրը սուրն է: Ան հորիզոնական դիրքով դրուած է վահանին տակ: Սուրը կը խորհրդանշէ երկրի պաշտպանութիւնն ու ուժը:

ԱՐՄԱԻՐ



Արմաիրի մարզը կը գտնուի Հայաստանի արեւմտեան հատուածին մէջ եւ Թուրքիոյ հետ սահմանը կը գծէ Արաքս գետով:

Անոր գլխավոր քաղաքներն են՝ Վաղարշապատը (ներկայիս՝ Էջմիածին) եւ Մեծամօրը:

Արմաիր քաղաքը կը գտնուի Պատմական Հայաստանի Մեծ Հայք նահանգին մէջ, որ Ք.Ա. 331-ին դարձած էր Երուանդունիներու մայրաքաղաքը: Հոն կայ նաեւ Ուրարտական թագաւորութեան օրերուն հիմնուած Արգիշտիիսինիլի եւ Երուանդունիներու մայրաքաղաք Երուանդաշատի փլատակները:

Նշանաւոր է իր գիւղատնտեսութեամբ եւ շինարարութեամբ: Արմաիրը անբնակ դարձած է 13-րդ դարուն՝ մոնկոլական արշաւանքներուն հետեւանքով: Հարիւրամեակներ անց, հիւսիսային Կովկասի չերքէզական գիւղերուն մէջ ապրող հայերը նոր քաղաք մը կը հիմնեն եւ 1848-ին կը կոչեն Արմաիր: Այս մարզին մէջ կարեւոր կառոյցներն են Էջմիածնի Մայր տաճարը, Գէորգեան ճեմարանը, Հռիփսիմեանց տաճարը, Շողակաթ եկեղեցին, Գայիանէ եկեղեցին, Սարդարապատի յուշահամալիրն ու ազգագրական թանգարանը, Զուարթնոց տաճարը, Սօսեաց անտառը, Մեծամօրի հիւլէակայանը (աթոմակայան):

Այստեղ տարածուած է Որդան կարմիր միջատը, որմէ կրնանք պատրաստել բնական կարմիր ներկը:

ՄԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ

Հայոց Յեղասպանութենէն 109 տարիներ ետք, դարձեալ կը մնանք պահանջատէր: Երբեք չզիջելով թշնամիին եւ միշտ բարձր պահելով մեր արժանապատուութիւնը, կը պահանջենք մեր արդար իրաւունքը:

Ստորեւ՝ Ս. Յակոբ Ազգային վարժարանի նախակրթարանի Դ. կարգի աշակերտներէն Տարօն Զաքարեանի, Լուգա Սալպզեանի եւ Լիլա Զապունեանի պատասխանները իրենց հայերէնի ուսուցչուհի տիկին Զեփիտ Ասատուրեանի հետեւեալ հարցերուն. «Երբ հայրենիքէն հողեր կը կորսնցնես, քնն կը զգաս. քնն կը մտածես ընել զայն ետ ունենալու համար եւ ինչպէ՞ս կը փաստես, թէ այդ կորսնցուցածդ քուկդ է»:

Մենք՝ հայերս, շատ հողեր կորսնցուցած ենք մեր պատմութեան ընթացքին: Տարիներ առաջ Յովհաննէս Թումանեան ըսած է. «Ու թէպէտեւ պատառ-պատառ մեր դրօշը սրբազան...», ճիշդ է: Այսօր մենք մէկ առ մէկ մեր հողերը կը կորսնցնենք, ինչպէս կորսնցուցինք մեր Արցախը: Երբ այս կը պատահի, բաւական ջղային եւ տխուր կ'ըլլանք: Անշուշտ բնական է լայ, բնական է ջղայնանալ, բայց մէկ բան, որ բնական չէ այդ ալ չպայքարիլն է: Ուրեմն մենք դեռ կը շարունակենք պայքարիլ, ինչպէս Թումանեանը կ'ըսէ. «Բայց գնում ենք մե՛նք անվեհեր Զարկերու տակ չար բախտին, Մեր աչքերը մի՛շտ դէպի վեր՝ Դէպի լոյսը մեր ուխտին»:

Մենք կը յաղթենք թուրքին մեր լեզուն եւ մեր կրօնքը պահպանելով: Թուրքին կը փաստենք, որ ինք պարտուած է եւ մենք յաղթական պիտի մնանք մինչեւ վերջ:

Տարօն Զաքարեան

Եթէ մեծ մաս մը իմ հայրենիքէս կորսնցնեմ, անշուշտ կը յուզուիմ, բայց պէտք է փառք տամ, որ դեռ մաս մը հող ունիմ, զոր հայրենիք կը կոչեմ:

Հայութիւն եւ Հայաստան չկորսնցնելու համար պէտք է սորվիմ իմ Հայոց Պատմութիւնս, սորվիմ հայերէն գրել, կարդալ, խօսիլ եւ յաճախեմ հայկական դպրոց: Այս ամէնը ընելով ես կը զօրանամ, որպէսզի Հայոց Պատմութիւնը փոխանցեմ օտարին: Իսկ փաստելու համար թէ այն ինչ որ կորսնցուցած եմ մերն է, ցոյց կու տամ նախահայրերուս նկարները իրենց գիւղին մէջ, մեր հին եկեղեցիներուն եւ խաչքարերուն շինութեան թուականները Հայոց Պատմութեան գիրքերուն մէջ: Կը կարծեմ, որ բոլոր ընկերներս պէտք է մեր պատմութիւնը յիշեն եւ մեր հողերը պահանջեն: Մենք այսպիսով պիտի պայքարինք եւ յաղթենք թշնամիին:

Լուգա Սալպզեան

Հինգ տարի առաջ ընտանիքիս հետ, առաջին անգամ ըլլալով Հայաստան այցելեցի:

Շրջապատյոններու ընթացքին այցելեցի Ծիծեռնակաբերդ. շատ մեծ էր եւ գեղեցիկ: Այցելեցինք նաեւ Գառնի տաճառ, Գեղարդ, Սեւանայ լիճ, Ծաղկաձոր եւ ուրիշ շատ գեղեցիկ տեղեր: Մենք՝ հայերս, Արարատ լեռը կորսնցուցած ենք, բայց չենք մոռցած եւ պիտի չմոռնանք: Ամբողջ աշխարհը գիտէ, որ Արարատ լեռը հայերուն կը պատկանի, նոյնիսկ Սուրբ Գիրքին մէջ յիշուած է: Արարատը հայկական անուն է եւ այդ կը նշանակէ, որ հայերուն կը պատկանի:

Լիլա Զապունեան

ԵԼԱԿ



Ելակը կը պատկանի վարդենիներու ընտանիքին եւ անոր ծննդավայրը Եւրոպան կը համարուի: Ան կրնայ ունենալ ճերմակ եւ կարմիր ծաղիկներ: Դարերու ընթացքին ելակը դարձած է սիրուած ու փնտռուած պտուղ մը, շնորհիւ իր քաղցր համին եւ հրապուրիչ գոյնին:

Ելակը դիւրութեամբ կ'աճի տարբեր կլիմաներու մէջ: Ան միակ պտուղն է, որ ունի մօտաւորապէս 200 սերմեր, որոնք կը գտնուին պտուղին վրայ: Ելակ ուտելը շատ օգտակար է, որովհետեւ ան ակոսները ճերմկցնելու յատկութիւնը ունի: Ութ ելակի մէջ ատելի շատ կենսանիւթ (vitamine) C կայ, քան նարինջի մը մէջ: Ելակը իր մէջ ունի թթու մը, որ քաղցկեղի որոշ տեսակներու դէմ կրնայ պայքարիլ:

Կան տարբեր տեսակի ելակներ, ինչպէս՝ ճերմակ, վարդագոյն, մանիշակագոյն: Ելակով կարելի է պատրաստել անոյշ, քաղցրաւենիք եւ նոյնիսկ աղցան:

Ո՛Վ Կ՛ՈՒԶԷ ԲԱԶՄԱԳԵՏ ԸԼԼԱԼ

Մայիս ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկէտն է 30 Յունիս 2024: Հետեւաբար սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը «Հորիզոն»ի խմբագրատուն՝

3401 Oliver Asselin
Montréal, Canada
H4J 1L5

1- 1918 Մայիսին ճակատագրական դժբախտութիւններուն հայ ժողովուրդը յաղթանակներ տանելով անկախութիւն հռչակեց:

- ա. Սարգսրապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէի ճակատամարտերուն:
- բ. Ղարաքիլիսէի, Բաշ Ապարանի եւ Աւարայրի ճակատամարտերուն:

2- Հայաստանի Հանրապետութեան զինանշանին կեդրոնը, վահանին վրայ կը տեսնուին Արարապ լեռը՝ Նոյեան տապանով եւ Պարմական Հայաստանի չորս թագաւորութիւնները: Թուի՞ այդ չորս թագաւորութիւնները:

- ա.
- բ.
- գ.
- դ.

3- Երբ կառուցուած է Սարգսրապատի հերոսամարտի յուշահամալիրը:

- ա. 1918 թուականի Սեպտեմբերին:
- բ. 1968 թուականի Մայիսին, Սարգսրապատի ճակատամարտի 50-ամեակին:
- գ. 1958 թուականի Մայիսին, Սարգսրապատի ճակատամարտի 40-ամեակին:

4- Ո՞ր կառուցուած է Սարգսրապատի յուշահամալիրը:

- ա. Սարգսրապատի յուշահամալիրը կառուցուած է Արագած լեռան լանջին:
- բ. Սարգսրապատի յուշահամալիրը կառուցուած է Գառնի տաճարին մօտ:
- գ. Սարգսրապատի յուշահամալիրը կառուցուած է հոն, ուր տեղի ունեցաւ ճակատամարտը:

5- Գուսան Հայկազունի «Հպարտ գնացէք» երգը նուիրուած է ...

- ա. Վարդան Մամիկոնեանին:
- բ. Վարդան Ստեփանեանին:
- գ. Խանասորի Վարդանին:

6- Ո՞վ էր Շուշիի ազատագրութեան հրամանատարը:

- ա. Սէյրան Տէր Թադէոսեան:
- բ. Արկադի Տէր Թադէոսեան (Քոմանտոսը):
- գ. Արկադի Ղուկասեան:

7- Երբ ազատագրուեցաւ Շուշի քաղաքը:

- ա. 1945 Մայիս 9-ին:
- բ. 1988 Մայիս 9-ին:
- գ. 1992 Մայիս 9-ին:

8- Արմաւիրի մարզին մէջ կը գտնուի...

- ա. Յովհանավանքը:
- բ. Էջմիածնի Մայր տաճարը:
- գ. Գառնի տաճարը:

9- Ինչ գոյնի ներկ կը ստանանք որդան կարմիրէն:

- ա. դեղին ներկ:
- բ. նարնջագոյն ներկ:
- գ. կարմիր ներկ:

10- Ելակին գոյնը կրնայ ըլլալ...

- ա. կարմիր, ճերմակ, վարդագոյն, մանիշակագոյն:
- բ. կարմիր, դեղին, կապոյտ:
- գ. ճերմակ, կանաչ, մանիշակագոյն:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Շողիկ Ազարիկեան Ադամեան
Զեւայրացք՝ Լորի Խաչերեանի